1. Գյումրի քաղաք, Ա. Բորյան փողոց 1-ին անցում 6/1 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №26022025-08-0045) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **274.38** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Բորյան փողոց, 1-ին անցուղի, 6/1 բնակելի տուն**
2) **17.75** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Բորյան փողոց, 1-ին անցուղի, 6/2 բնակելի տուն**

2025-06-03 11:46:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2025 թվականի N 1015-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԹԱՓԱՌՈՂ ԵՎ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի Ղարսի խճուղու հարևանությամբ թափառող և տնային կենդանիների կացարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

3) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

4) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Սերգեյ Մուրադյան -Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հունիսի 2025 **թվականի** N 1014 Ա

**«ՂԱՐԻԲՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ղարիբյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստեփան Ղարիբյանի (ՀՎՀՀ՝ 05546864, գրանցման ամսաթիվը՝ 2018 թվականի հունիսի 27-ին) 2025 թվականի փետրվարի 25-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի փետրվարի 25-ին 6697-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Ղարիբյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստեփան Ղարիբյանին Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 46/1 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ղարիբյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ստեփան Ղարիբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2025 թվականի N 1013-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԱՐԻՍԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 9/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լարիսա Մարտիրոսյանի (ՀՎՀՀ՝ 57457649, գրանցման ամսաթիվը՝ 2023 թվականի մայիսի 5-ին) 2025 թվականի մայիսի 21-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսի 21-ին 6530-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Լարիսա Մարտիրոսյանին Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 9/1 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Լարիսա Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք. Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«04» հուլիսի 2025 **թվականի** N 1012-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ N 1 ՀԱՍՑԵԻ 7000,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց 4-րդ փակուղի 1 հասցեի հողամասը և շինությունները ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում են Թամարա Լյովայի Մարուքյանին և Ազատ Սամվելի Հովհաննիսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15042025-08-0009 վկայական):

Քաղաքացի Ազատ Սամվելի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին իրեն և Թամարա Լյովայի Մարուքյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց 4-րդ փակուղի 1 հասցեի 7000,4 (յոթ հազար ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու և 53,77 (հիսուներեք ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տնտեսական շինության; 65,49 (վաթսունհինգ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շինության; 34,24 (երեսունչորս ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շինության; 113,68 (մեկ հարյուր տասներեք ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շինության; 5,32 (հինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հորի; 6,46 (վեց ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի ; 8,05 (ութ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի; 5,01 (հինգ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի; 0,66 (զրո ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի; 8,27 (ութ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի նպատակային նշանակությունները արտադրականից բնակելի փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Ազատ Սամվելի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մայիսի 02 -ին N 5531 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց 4-րդ փակուղի 1 հասցեի 7000,4 (յոթ հազար ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, գործառական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Փոփոխել Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոց 4-րդ փակուղի 1 հասցեի 53,77 (հիսուներեք ամբողջ յոթանասունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով տնտեսական շինության; 65,49 (վաթսունհինգ ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շինության; 34,24 (երեսունչորս ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շինության; 113,68 (մեկ հարյուր տասներեք ամբողջ վաթսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շինության; 5,32 (հինգ ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հորի; 6,46 (վեց ամբողջ քառասունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի ; 8,05 (ութ ամբողջ հինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի; 5,01 (հինգ ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի; 0,66 (զրո ամբողջ վաթսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի; 8,27 (ութ ամբողջ քսանյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի նպատակային նշանակությունները արտադրականից բնակելիի:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Թամարա Լյովայի Մարուքյանին և Ազատ Սամվելի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հունիսի 2025 **թվականի** N 1011-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 1654-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 30-ի N 1654-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 30-ի <<Քաղաքացիներ Կոլյա Հովհաննեսի Հարությունյանին և Ասյա Միխայելի Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 234 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 1045,63 քառակուսի մետր արտաքին (1025,18 քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց հասարակական շինությունը օրինական ճանաչելու մասին>> N 1654-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին և 2-րդ կետերում <<1045,63(մեկ հազար քառասունհինգ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<1149,81(մեկ հազար մեկ հարյուր քառասունինն ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   2) որոշման 1-ին կետում <<941,45(ինը հարյուր քառասունմեկ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<1045,63(մեկ հազար քառասունհինգ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   3) որոշման 1-ին կետում <<845,9(ութ հարյուր քառասունհինգ ամբողջ ինը տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<933,2(ինը հարյուր երեսուներեք ամբողջ երկու տասնորդական)>> թվով բառերով.
   4) որոշման 2-րդ և 3-րդ կետերում <<91,95(իննսունմեկ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<91,98(իննսունմեկ ամբողջ իննսունութ հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   5) որոշման 1-ին կետում <<7100416(յոթ միլիոն մեկ հարյուր հազար չորս հարյուր տասնվեց)>> թիվն ու բառերը փոխարինել <<7886141(յոթ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար մեկ հարյուր քառասունմեկ)>> թվով և բառերով:

2025.06.04 12:03:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2025 թվականի N 1010-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 1000-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ներկայացված 2025 թվականի հունիսի 02-ի Ձ/517 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու մշտական գործող թվով չորս հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին» N 1000-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 4-կետը լրացնել հետևյալ 8-րդ ենթակետով.

« 8) Մինասյան Սարիկ Սամվելի :»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սարիկ Մինասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի,2025 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2025 **թվականի** N 1009Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԹԱՓԱՌՈՂ ԵՎ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի Ղարսի խճուղու հարևանությամբ թափառող և տնային կենդանիների կացարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովիկ Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2025 թվականի N 1008-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀՐԱՉԻԿ ՇԻՐԱԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի (այսուհետ՝ բաժին ) պետի ծառայողական պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Հրաչիկ Շիրակի Վարդանյանին՝ 2025 թվականի հունիսի 3-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրաչիկ Շիրակի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**<<02>> հունիսի 2025 թվականի N 1007-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՉԱԽՈՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետով և հիմք ընդունելով Արմենուհի Վարուժանի Չախոյանի 2025 թվականի հունիսի 1-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (ծածկագիր՝ 2.1-15) Արմենուհի Վարուժանի Չախոյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ 2025 թվականի հունիսի 3-ից:
**2.**Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմենուհի Վարուժանի Չախոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<02>> հունիսի 2025 թվականի N 1006-Ա

**ԱՎԱԳ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Ավագ Հովհաննեսի Խաչատրյանի 2025 թվականի հունիսի 2-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Ավագ Հովհաննեսի Խաչատրյանին ( ծնված՝ 1976 թվականի հոկտեմբերի 23-ին, անձնագիր՝ N AT0693720, տրված՝ 2021 թվականի մարտի 11-ին, ՀՀ ոստիկանության 016-ի կողմից, հաշվառման վայրը՝ քաղաք Գյումրի, Նար-Դոսի փող., տուն 28, հանրային ծառայությունների համարանիշը՝ 3310760472 ) 2025 թվականի հունիսի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրու բնակարանների սպասարկում >> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:

**2.** Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ավագ Հովհաննեսի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2025 թվականի N 1005-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ » ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱԼՅԱ ԱՐՍԵՆԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Ալյա Արսենի Ադամյանի 2025 թվականի հունիսի 2-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Գյումրու բնակարանների սպասարկում » փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ալյա Արսենի Ադամյանին 2025 թվականի հունիսի 3-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալյա Արսենի Ադամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2025 թվականի № 1004-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑ 112Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №1062121) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Սիմոնյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №6755 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Շիրվանզադեի փողոց 112ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №1062121) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 112/1 բնակելի տուն**

2025-06-02 11:55:05 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2025 թվականի N 1003 Ա

### ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի հունիսի 2-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին քննարկվել է՝ 23 մայիսի 2025 թվականին ծնված նորածնին առանց ծնողական խնամքի մնացած երեխա ճանաչելու վերաբերյալ:

Անչափահասի մայրը՝ Նվարդ Դավիթի Համբարձումյանը ներկայացրել է դիմում երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից հրաժարման (հիմք՝ դիմում կազմված 27.05.2025 թվականին Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի կողմից և հաստատված «Գյումրու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից):

Ղեկավարվելով ընտանեկան օրենսգրքի 109-րդ, 110-րդ հոդվածների 1-ին մասերի, Հայաստանի Հանրապետության «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 2-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 2-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաշվառել՝ 23 մայիսի 2025 թվականին ծնված նորածնին առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
2. Երեխային տալ ազգանունը՝ Համասյան, իսկ անունը՝ Զարինե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ու Մ

«02» հունիսի 2025 թվականի N1002-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԻՐԱԿ» ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի «Շիրակ» գերեզմանատան Արցախյան երկու պատերազմներում զոհված զինծառայողների գերեզմանների և տարածքի վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

3) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

4) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

3) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2025 թվականի N 1001-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՇԻՐԱԿ» ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի «Շիրակ» գերեզմանատան Արցախյան երկու պատերազմներում զոհված զինծառայողների գերեզմանների և տարածքի վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Վարդան Ալթունյան - Գյումրի համայնքի ներդրումային ծրագրերի փորձագետ,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Տիգրան Միքայելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գործակալ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2025 թվականի N 1000- Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԹՎՈՎ ՉՈՐՍ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2016թ. նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 52-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 02-ի NN 5-Ա-12-Ա որոշումները, Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարների՝ գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականին՝ NN 5484, 6183, 5183, 4372, 5491, Զ/441 թվագրումներով)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու մշտական գործող թվով չորս հանձնաժողովների կազմերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1-ին կետով հաստատված հանձնաժողովների կազմերում ընդգրկված անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
2025 թվականի մայիսի 30-ի
N 1000 -Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԹՎՈՎ ՉՈՐՍ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

1. Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողով՝

1) Ղուկասյան Գևորգ Կոլյայի-նախագահ,
2) Դավթյան Վահան Սամվելի-նախագահի տեղակալ,
3) Հարությունյան Արտակ Սամվելի,
4) Հայրապետյան Գայա Վարազդատի,
5) Հակոբյան Անդրանիկ Էդուարդի,
6) Գասպարյան Լիզա Մելիքի,
7) Սիմոնյան Կարեն Անդրանիկի,
8) Մոսոյան Սուսաննա Հակոբի,

2. Մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական գործող հանձնաժողով՝

1) Ադամյան Սվետլանա Միշայի -նախագահ,
2) Բարսեղյան Էմմա Մասիսի-նախագահի տեղակալ,
3) Լալազարյան Կարինե Սոսի,
4) Նազարյան Լուսինե Հովհաննեսի,
5) Անանյան Լևոն Գագիկի,
6) Գևորգյան Հովհաննես Մնացականի,
7) Մխիթարյան Ռուբեն Դավիթի,

3. Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական գործող հանձնաժողով՝

1) Արամյան Շավարշ Արամի -նախագահ,
2) Եղիգարյան Վարդան Աշոտի-նախագահի տեղակալ,
3) Սահակյան Սեդրակ Ենոքի,
4) Բեգզադյան Նարեկ Հովհաննեսի,
5) Բեյբուտյան Աստղիկ Գագիկի,
6) Մանուկյան Հովհաննես Սամվելի,
7) Գրիգորյան Կարեն Մարտունի,
8) Կիրակոսյան Վահե Սամվելի,

4. Իրավական հարցերի մշտական գործող հանձնաժողով՝

1) Բաղդասարյան Էդգար Սանասարի-նախագահ,
2) Մեսրոպյան Նարինե Մուշեղի- նախագահի տեղակալ,
3) Անանյան Լուսինե Հակոբի,
4) Հարությունյան Քնարիկ Համլետի,
5) Մկրտչյան Վահագն Հրաչի,
6) Մուրադյան Աննա Եղիշի,
7) Միրզոյան Նարեկ Լյովայի:

# ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29» մայիսի 2025 թվականի N 999-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 910-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդականների և օգնականների միջև պարտականությունները բաշխելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 26-ի N 2330-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 910-Ա որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ 6-րդ ենթակետով.

« 6) Գևորգյան Ռուբեն - համայնքի ղեկավարի օգնական.

աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, բյուջեի եկամուտների հավաքագրման, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման, գովազդի բաժիններ, «Բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերություն: »:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուբեն Գևորգյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

mID

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի.2025 թվական